№9

Մենք հավասար ենք

Տեղեկատվական թերթիկ

Հոկտեմբեր 2008

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության
«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Ամփոփվեցին հաշմանդամների մրցույթների արդյունքները

→ էջ 2

Սիրվարդ Լևոնյան, հաշմանդամ կանանց գեղեցկության 4-րդ հանրապետական ֆոտոմրցույթի հաղթող

Լուսանկարը՝ Կարեն Միհրանյանի

Հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Ստեղծագործական ներուժի և գեղեցկության բացահայտում

Ամփոփվեցին հաշմանդամների մրցույթների արդյունքները

Հոկտեմբերի 10-ին Կամերային երաժշտության տան դահլիճում տիրում էր աննախադեպ աշխուժություն: Հաշմանդամ կանանց գեղեցկության 4-րդ հանրապետական ֆոտոմրցույթի և հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը համախմբել էր տարբեր նախասիրություններ ունեցող բազմաթիվ հաշմանդամ և ոչ-հաշմանդամ մարդկանց:

Երկու մրցույթներն էլ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ անցկացրել էր «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում:

Այս տարի գեղեցկության ֆոտոմրցույթին մասնակցության հայտ էին ներկայացրել Երևանից և Հայաստանի 8 մարզերից 16-40 տարեկան 42 հաշմանդամ աղջիկներ և կանայք:

Ժյուրիի կազմում ընդգրկվեցին անվանի գործիչներ՝ լրագրող Արթուր Բախտամյանը, ՀՀ վաստակավոր արտիստուհի, երգչուհի Աննա Մայիլյանը, նկարիչ և երգահան Մարտին Ահարոնյանը, հրապարակախոս Հակոբ Մարտունին: Ժյուրիի նախագահի դերը ստանձնել էր բանասիրական գիտությունների թեկնածու, Լեզվաբանական համալսարանի դոցենտ, հեռուստալրագրող Զավեն Հարությունյանը:

Միսս Գեղեցկություն – 2008 տիտղոսին արժանացավ Երևանի բնակչուհի Սիրվարդ Լևոնյանը, որը ժյուրիի անդամներին գերել էր հմայիչ ժպիտով և աննկարագրելի գեղեցկությամբ: Ի դեպ, աղջիկներից ոմանց համար օրը լի էր կրկնակի անակնկալներով: Մասնավորապես, Վիցե-Միսս Նարինե Ղուկասյանը և Միսս ժպիտ Աննա Թադևոսյանը մրցանակների արժանացան նաև հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների մրցույթում:

Միսս Կամք հռչակվեց Սպիտակի բնակչուհի Արմենուհի Արմենակյանը, որն հիրավի տոկուն և կենսախինդ բնավորության տեր անձնավորություն է: Խրախուսական մրցանակների արժանացան Գոհար Նավասարդյանը (Վայոց Ձորի մարզ, գ.Գլաձոր),

Լուարա Սիմոնյանը (Արմավիր), Անա-հիտ Խաչատրյանը (Երևան), Քրիս-տինե Աղանյանը (Գյումրի), Ամալյա Գևորգյանը (Սպիտակ) և Հենրիետ-տա Խաչատրյանը (Արմավիրի մարզ, գ.Այգեկ):

Հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների 2-րդ հանրապետական մրցույթին ներկայացված էին Երևանում և Հայաստանի 5 մարզերում բնակվող հեղինակների 200-ից ավել ստեղծագործություններ: Ստեղծագործական մրցույթի ժյուրիի կազմում ընդգրկվեցին անվանի արվեստաբաններ՝ քանդակագործ, ցուցահանդեսների կազմակերպիչ Հերիքնազ Գալստյանը, ասեղնագործ, ժողովրդական վարպետ Անահիտ Իսունցը և Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն Սարո Սարուխանյանը (ժյուրիի նախագահ):

Հայտարարված երեք անվանակարգերում և «Երկրաշարժն իմ աչքերով» հատուկ անվանակարգում աշխատանքներից լավագույնները արժանացան ժյուրիի գովասանքի և արժեքավոր մրցանակների: «Գոբելեն և ասեղնագործություն» անվանակարգում գլխավոր մրցանակը վաստակեց Սոնա Մարդումյանը, իսկ մնացած տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ Աշոտ Կարապետյան (առաջին մրցանակ), Աիդա Մխիթարյան (երկրորդ մրցանակ),և Աննա Թադևոսյան (երրորդ մրցանակ): «Փորագրություն, խեցեգործություն և բատիկա» անվանակարգում մրցանակների արժանացան Արսեն Ասատրյանը (գլխավոր մրցանակ), Արմինե Բաղդասարյանը (առաջին մրցանակ), Շուշան Հեպինյանը (երկրորդ մրցանակ) և Աբրելիկ Ազարյանը («Երկրաշարժն իմ աչքերով» թեմայով գլխավոր մրցանակ): «Գեղանկարչություն» անվանակարգում գլխավոր մրցանակի արժանացավ Նարինե Ղուկասյանը, առաջին մրցանակի՝ Հայկ Կակոսյանը, երկրորդ մրցանակի՝ Կարեն Քյանդարյանը, իսկ «Երկրաշարժն իմ աչքերով» անվանակարգում հաղթեց Հակոբ Հայրապետյանը:

Մրցույթներին ինֆորմացիոն աջակցություն ցուցաբերեցին «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունը և «Երևան-FM» ռադիոկայանը, իսկ մրցանակները տրամադրեցին «Փարոս» հիմնադրամը (ԱՄՆ), «Նոյյան Տապան» և «Զիգզագ» խանութները, «Ռենուար» բուտիկ-սրահը և «Դարմ» ընկերությունը:

Գլխավոր խմբագիր
Արմեն Ալավերդյան

Հրապարակումը պատրաստեցին
Դավիթ Բաբայան
Մարիաննա Չալիկյան
Իզաբելլա Կարապետյան

Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ, Երևան
0002,Դեմիրճյան 36

Հեռ./ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am